ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2022 թվականի թիվ 144--Ա

ք. Երևան

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2022 թվականի հոկտեմբերի 07-ին հարուցված թիվ 15 վարչական վարույթի նյութերը՝***պարզեց.***

2022 թվականի հոկտեմբերի 07-ին Հանձնաժողով մուտքագրված «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Իրավատեր) դիմումում նշված է ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից առանց նախապես իրավատիրոջ թույլտվության ձեռքբերման իր տեսավարձույթ ծառայության տեսացանկում բաժանորդներին հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող կինո-հեռուստաֆիլմ (այսուհետ՝ Ֆիլմ) տրամադրելու փաստի վերաբերյալ:

Ըստ Իրավատիրոջ՝ ցանցային օպերատորն առանց իրավատիրոջ համաձայնության իր տեսավարձույթ ծառայության տեսացանկում բաժանորդներին առաջարկել է հետևյալ կինո-հեռուստաֆիլմը.

Ֆիլմի անվանում	**Տևողություն**	**Արտադրության տարեթիվ**	**Արտադրող երկիր**	**Լիցենզիայի գործողության ժամկետ**
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐՐԸ («ПЯТЫЙ ЭЛЕМЕНТ» «LE CINQUIEME ELEMENT»)	1x126	1997 թ.	ՖՐԱՆՍԻԱ	01.01.2022թ.-31.12.2023թ.

Իրավատերը տեղեկացրել է նաև, որ 2021 թվականի հունվարի 01-ին «ՄԱՈՒՐԻՍ ՖԻԼՄ» ՍՊ ընկերության հետ կնքված թիվ 11/01/21 լիցենզայի պայմանագրով փոխանցված բացառիկ լիցենզիայի հիման վրա հանդիսանում է դիմումում նշված ֆիլմի Հայաստանի Հանրապետության տարածքում տեսավարձույթի միջոցով (SVOD) ցուցադրության բացառիկ իրավատերը:

Իրավատերը պնդում է, որ քննարկվող դեպքում գործ ունենք ֆիլմն առանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության ցուցադրության «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտման հետ և այս պարագայում առկա է նաև «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների» մասին օրենքով պաշտպանվող տեսալսողական ստեղծագործությունների նկատմամբ Իրավատիրոջ ունեցած հեղինակային իրավունքների խախտում, քանի որ Իրավատերը հանդիսանում է նշված ֆիլմի նկատմամբ հեղինակային իրավունքների Հայաստանի Հանրապետության տարածքում բացառիկ իրավատերը, իսկ ցանցային օպերատորի կողմից նշված ֆիլմը տեսավարձույթ ծառայության միջոցով առաջարկվում է առանց Իրավատիրոջ հետ հեղինակային պայմանագիր կնքելու:

Ելնելով վերոնշվածից և տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության խախտման փաստից, Իրավատերը խնդրում է ցանցային օպերատորին պատասխանատվության ենթարկել առանց Իրավատիրոջ համաձայնության վերոհիշյալ Ֆիլմն իր տեսավարձույթ ծառայության տեսացանկով բաժանորդներին առաջարկելու համար:

Իրավատերն իր դիմումում նշում է նաև՝

«Նկատի ունենալով ցանցային օպերատորի դերն ու կշիռը հեռահաղորդակցության շուկայում՝ չբացառելով, որ վերջինս դիմումում նշված կինո-հեռուստաֆիլմի օգտագործման թույլտվությունը ձեռքբերած լինի որևէ երրորդ անձից, որին բարեխիղճ մոլորությամբ ընկալած լինի որպես այդպիսի կինո-հեռուստաֆիլմի իրավատեր, ինչպես նաև ղեկավարվելով «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքի մասին» օրենքի 66-րդ հոդվածի 4-րդ մասով, ըստ որի՝ «Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերը կարող է պահանջել, որ այն անձինք, ովքեր որևէ կերպ առնչվում են սույն օրենքով պահպանվող իրավունքների խախտմանը (արտադրողներ, տպագրողներ, ներկրողներ, նմանակված օրինակներ կամ իրավախախտում առաջացնող սարքավորումներ տիրապետողներ), պահանջի դեպքում անմիջապես տեղեկություններ հայտնեն կեղծ օրինակների արտադրությանը և տարածմանը մասնակցող երրորդ անձանց, ինչպես նաև այդ օրինակների ձեռքբերման աղբյուրների ու տարածման ուղիների մասին և ներկայացնեն խախտմանն առնչվող փաստաթղթերը»: «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ն գրավոր դիմել է ցանցային օպերատորին՝ պահանջելով ոչ ուշ, քան տվյալ գրությունը ստանալուց մեկշաբաթյա ժամկետում, տեղեկություններ հայտնել նշված ֆիլմի վարձույթով տրամադրելու իրավունքի ձեռքբերման աղբյուրների վերաբերյալ՝ տրամադրելով համապատասխան գործարքին առնչվող բոլոր փաստաթղթերը:

Ցանցային օպերատորը, վերոնշյալ նախապահանջից ելնելով, նախաձեռնել է բանակցային գործընթաց, որը սակայն հաջողությամբ չի պսակվել, քանի որ բանակցային գործընթացում քննարկված թեմաների շրջանակը ներառել է նաև «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ից այնպիսի փաթեթի ձեռքբերման հնարավորության հարցը, որում ներկայացված կլինի նաև դիմումում նշված ֆիլմի տեսավարձույթի միջոցով (SVOD) ցուցադրության իրավունքը, ինչպիսի եղանակով կհատուցվեր ցանցային օպերատորի կողմից «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ի բացառիկ գույքային իրավունքի խախտման հետևանքով վերջինիս հասցված վնասները:

Նման պայմաններում ակնհայտ է, որ ցանցային օպերատորը չի կատարել «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախապահանջը:

Միաժամանակ Իրավատերը գտնում է, որ այն դեպքում, երբ ցանցային օպերատորը դիմումում նշված ֆիլմն օգտագործելու թույլտվությունը ձեռք բերեր օրինական ճանապարհով՝ Հայաստանի Հանրապետության տարածքում դրա բացառիկ իրավատեր «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ի հետ համապատասխան պայմանագրի կնքման միջոցով, ստիպված էր լինելու դրա համար վճարել 3.000 ԱՄՆ դոլար՝ պայմանով, որ հնարավոր բանակցությունների ընթացքում ցանցային օպերատորը չի համաձայնել վճարելու ավելի բարձր արժողության վարձատրություն՝ գնահարցման դեպքում ինչպիսինը միանշանակ կինո-հեռուստաֆիլմի իրավատիրոջ կողմից անպայմանորեն, որպես կինո-հեռուստաֆիլմի օգտագործման թույլտվության ձեռքբերման վարձատրության չափի շուրջ բանակցությունների մեկնարկային գին, առաջարկվելու էր:

Իրավատերն իր դիմումին կից որպես ապացույց ներկայացրել է «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության 2022 թվականի հուլիսի 19-ի գրությունը (նշված գրությունը գրվել է ի պատասխան Իրավատիրոջ հարցմանը), համաձայն որի տրամադրվել է թիվ 121482322 պայմանագրի հիման վրա 16.05.2022-04.07.2022թթ. ժամանակահատվածում բաժանորդին մատուցված տեսավարձույթ ծառայության համար դուրս գրված հաշվի վերծանումը, ըստ որի բաժանորդը դիմումում նշված Ֆիլմը դիտելու իրավունքը ձեռք է բերել՝ դրա դիմաց վճարելով 100 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Իրավատիրոջ դիմումը՝ 2022 թվականի հոկտեմբերի 07-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2022 թվականի հոկտեմբերի 10-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում ցանցային օպերատորի կողմից ներկայացվել է հետևյալ պարզաբանումը.

«Գտնում ենք, որ «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2022 թվականի հոկտեմբերի 07-ին հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Ծանուցման մեջ նշվել է, որ «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերությունը Հանձնաժողով 2022 թվականին մուտքագրված դիմումով տեղեկացրել է, որ իրեն է պատկանում «Հինգերորդ տարրը» կինոհեռուստաֆիլմի (ֆիմը) Հայաստանի Հանրապետության տարածքում ցուցադրման իրավունքը:

«ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերությունը հայտնել է, թե Ընկերության կողմից առանց նախապես իրավատիրոջ թույլտվության ձեռքբերման «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության տեսավարձույթ ծառայության տեսացանկում բաժանորդներին առաջարկվել է նշված ֆիլմը:

Սույնով հայտնում ենք, որ Ծանուցման մեջ արձանագրված «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերության պնդումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերության կողմից տեսավարձույթ ծառայության տեսացանկում բաժանորդերին չի առաջարկվել «Հինգերորդ տարրը» ֆիլմը:

Քննարկվող հարցի վերաբերյալ «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերությունը նախապահանջ է ուղղել «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերությանը և վերջինս հայտնել է, որ «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերությունը չի հանդիսանում նախապահանջի հասցեատեր:

Նաև ցանկանում ենք Հանձնաժողովի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ դեռևս 2022 թվականի մայիսի 12-ին Հանձնաժողովին ուղղված գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության կողմից «ԹԻՄ ԹԻ-ՎԻ» (Team TV) հարթակի «Տեսավարձույթ» բաժնում «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության լիցենզիայի շրջանակներում բացառության կարգով իրականացվել է միայն «Մեր Բակը 25 տարի անց» ֆիլմի տեղադրումը, և նշված գրությունից հետո որևէ վերաբերելի փոփոխություն տեղի չի ունեցել:

Այսպիսով, արծածված հարցի վերաբերյալ Ընկերության դիրքորոշումը կայանում է նրանում, որ վերջինս որևէ իրավախախտում թույլ չի տվել, քանի որ Ընկերությունը չի կատարել Ծանուցման մեջ նկարագրված գործողությունները և տեսավարձույթ ծառայության ցանկում բաժանորդներին ընկերության կողմից չի առաջադրվել «Հինգերորդ տարրը» ֆիլմը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության դեպքում»:

*Վարչական զանցակազմը դրսևորվում է չորս բաղկացուցիչ մասերի (տարրերի)՝ վարչական զանցանքի օբյեկտի, վարչական զանցանքի օբյեկտի կողմի **<u>վարչական զանցանքի սուբյեկտի</u>** և վարչական զանցանքի սուբյեկտի կողմի, միաժամանակյա առկայությամբ: Նշված տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է վարչական զանցակազմի գոյությունը:*

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերությունը չի հանդիսանում «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերության կողմից նշված ենթադրյալ իրավախախտման սուբյեկտը, հետևաբար՝ բացակայում է ենթադրյալ իրավախախտման զանցակազմը, ուստի՝ Հանձնաժողովի կողմից Ընկերության նկատմամբ 2022 թվականի հոկտեմբերի 07-ին հարուցված վարույթը ենթակա է կարճման»:

Վարչական վարույթի ընթացքում ցանցայի օպերատորի կողմից ներկայացվել է «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության 2022 թվականի հոկտեմբերի 11-ի ևս մեկ գրություն՝ ուղղված Իրավատիրոջ ներկայացուցչին, որտեղ նշված էր, որ *«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ–ին ուղղված նախապահանջի առարկա հանդիսացող ոչ գծային տեսալսողական տեղեկավության տրամադրումն իրականացվել է «Թիմ» ՓԲ ընկերության կողմից:*

Ցանցային օպերատորի կողմից ներկայացվել են նաև *«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ–ի և «Թիմ»* ՓԲԸ– ի միջև կնքված պայմանագիրը՝ «Թիմ» ՓԲԸ–ի կողմից իր հեռուստատեսության ծառայության մատուցման նպատակով «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ–ի ապարատա–ծրագրային

համալիրը համակցելու եղանակով օգտագործելու մասին (08.04.2022թ.-ի թիվ ԱՊՄ-Շ 294/21 պայմանագիր և համաձայնագրեր) և դիրքորոշում (ի լրումն Հանձնաժողով 2022 թվականի հոկտեմբերի 26-ին ներկայացրած դիրքորոշման), համաձայն որի՝

««ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողով ներկայացված դիմումի համաձայն՝ ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել 2022 թվականի մայիսի 24-ին, սակայն դիմումը Հանձնաժողով է ներկայացվել 2022 թվականի հոկտեմբերի 07-ին, այսինքն ՝ ենթադրյալ իրավախախտումից ավելի քան չորս ամիս անց:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում****, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:*

Տվյալ դեպքում ենթադրյալ իրավախախտումից , «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողով ներկայացված դիմումի ներկայացման օրվա (07.10.2022թ.) դրությամբ, անցել է ավելի քան չորս ամիս, իսկ սույն դիրքորոշումը ներկայացնելու օրվա (06.12.2022թ.) դրությամբ՝ ավելի քան վեց ամիս, այսինքն՝ առկա է Ընկերությանը վարչական որևէ տույժի ենթարկելու արգելք՝ դրա համար սահմանված վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

Միաժամանակ, Հանձնաժողովին տեղեկացնում ենք նաև, որ «Հինգերորդ տարրը» կինո-հեռուստաֆիլմը (ֆիլմը) ԹԻՄ ԹԻ ՎԻ (TEAM TV) հավելվածում «ԹԻՄ» ՓԲԸ կողմից արդեն ավելի քան երկու ամիս չի առաջարկվել (առկա չէ) տեսադարան բաժնում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովին խնդրում ենք «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության նկատմամբ 2022 թվականի հոկտեմբերի 07-ին հարուցված վարչական վարույթը կարճել»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Տեսալսողական մեդիայի մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը»:

Օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը սահմանում են.

3. Առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակում են իրականացնում ոչ գծային Հեռարձակողները, որոնք գործունեություն են իրականացնում կարգավորող պետական մարմնի սահմանած կարգով գործունեությունը թույլատրող որոշումն ստանալուց հետո:

4. Կարգավորող պետական մարմնի՝ գործունեությունը թույլատրող որոշումն ստանալուց հետո ոչ գծային Հեռարձակողները կարող են պայմանագրային հիմունքներով գործունեություն իրականացնել ցանցային օպերատորների և այլ հաղորդակցության ցանցերով:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 203-Ա որոշմամբ՝ ցանցային օպերատորին տրվել է ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն:

Հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 18-ի «Ոչ գծային Հեռարձակողների կողմից առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու կարգը սահմանելու մասին» թիվ 160-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 4-րդ կետը սահմանում է.

«4. Հանձնաժողովի՝ գործունեությունը թույլատրող որոշումը ստանալուց հետո ոչ գծային Հեռարձակողները կարող են պայմանագրային հիմունքներով գործունեություն իրականացնել ցանցային օպերատորների և այլ հաղորդակցության ցանցերով»:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի զ) կետի համաձայն՝ Հեղինակային իրավունքի օբյեկտներ են՝

զ) տեսալսողական ստեղծագործությունները (կինո-հեռուստաֆիլմերը, անիմացիոն և մուլտիպլիկացիոն կինոնկարները, կարճ երաժշտական տեսահոլովակները, գովազդային, փաստագրական, փաստավավերագրական և այլ ֆիլմերը):

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:

Ստեղծագործության էական մաս է համարվում ստեղծագործության որևէ մասը, որը տվյալ ստեղծագործությանը ծանոթ ցանկացած անձ ինքնուրույն կարող է նույնականացնել որպես այդ ստեղծագործության մաս:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:»

Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ»:

Հանձնաժողովն ուսումնասիրել է վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Իրավատիրոջ կողմից Հանձնաժողով ներկայացված ապացույցների հետ, որի արդյունքում հայտնի է դարձել հետևյալը.

- 2022 թվականի հունիսի 08-ին Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ «ԹԻՄ» ՓԲ ընկերության նկատմամբ հարուցել է թիվ 18 վարչական վարույթը: Հանձնաժողովը «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ և «ԹԻՄ» ՓԲ ընկերություններից պահանջել է պարզաբանել, թե ոչ գծային տեսալսողական տեղեկատվության տրամադրումը (VOD), որ լիցենիայի համաձայն է մատուցվում՝ **«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության** (լիցենզիա՝ ԿՀ N 311, տրման ամսաթիվը՝ 28.04.2021թ.) լիցենզիայի, թե՞ **«ԹԻՄ» ՓԲ ընկերության** (լիցենզիա՝ ԿՀ N 281, տրման ամսաթիվը՝ 13.07.2020): Հարուցված վարչական վարույթի շրջանակներում պարզվել է որ ոչ գծային տեսալսողական տեղեկատվության տրամադրումն (VOD) իրականացվում է «Թիմ» ՓԲԸ-ի կողմից: Ցանցային օպերատորն 2022 թվականի հոկտեմբերի 25-ին Հանձնաժողով ներկայացրած իր դիրքորոշման մեջ հիշեցրել է, որ 2022 թվականի մայիսի 12-ին Հանձնաժողովին ուղղված գրության մեջ նշված է. «այս պահին բացառություն է կազմում «Մեր Բակը 25 Տարի անց» ֆիլմի տեղադրումը Հարթակի «Տեսավարձույթ» բաժնում, որն իրականացվում է՝ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի լիցենզիայի շրջանակներում»: Նշվածը ևս մեկ անգամ հաստատել է ցանցային օպերատորը այս վարչական գործի շրջանակներում՝ հաստատելով այն և նշելով, որ *Ծանուցման մեջ արձանագրված «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերության պնդումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերության կողմից տեսավարձույթ ծառայության տեսացանկում բաժանորդերին չի առաջարկվել «Հինգերորդ տարրը» ֆիլմը:*

- Իրավատիրոջ կողմից որպես ապացույց ներկայացված «ԹԻՄ» ՓԲ ընկերության կողմից թիվ 121482322 պայմանագրի հիման վրա 16.05.2022-04.07.2022թթ. ժամանակահատվածում բաժանորդին մատուցված տեսավարձույթ ծառայության համար դուրս գրված հաշվի վերծանումը, չի կարող այս վարույթի ընթացքում հանդես գալ որպես ապացույց, քանի որ վարչական վարույթ է հարուցվել «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության նկատմամբ:

- Իրավատիրոջ կողմից Հանձնաժողով ներկայացված դիմումի համաձայն՝ ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել 16.05.2022-04.07.2022թթ ժամանակահատվածում (ըստ բաժանորդին մատուցված տեսավարձույթ ծառայության համար դուրս գրված հաշվի վերծանումից), սակայն վարչական վարույթ հարուցելու դիմումը Հանձնաժողով է ներկայացվել

2022 թվականի հոկտեմբերի 07-ին, այսինքն՝ ենթադրյալ իրավախախտումից ավելի քան չորս ամիս անց:

- Միաժամանակ ըստ իրավատիրոջ, ցանցային օպերատորի կողմից առանց օրինական հիմքերի տեսավարձույթ ծառայության միջոցով տվյալ Ֆիլմի վարձույթը հնարավոր դարձնելով, ցանցային օպերատորը Իրավատիրոջը փաստացի պատճառել է առնվազն 3.000 ԱՄՆ դոլար վնաս: Հանձնաժողովը սույն վարույթի շրջանակներում չի անդրադառնում բերված փաստարկներին, քանի որ դա իր լիազորությունների շրջանակում չէ:

Հաշվի առնելով նաև այն փաստը, որ ցանցային օպերատորը հարուցված վարչական վարույթի ընթացքում ներկայացված իր պարզաբանման մեջ նշել է, որ որևէ իրավախախտում թույլ չի տվել և տեսավարձույթ ծառայության ցանկում բաժանորդներին Ընկերության կողմից չի առաջադրել «Հինգերորդ տարրը» ֆիլմը, ինչպես նաև ենթադրյալ իրավախախտումից անցել է ավելի քան երկու ամիս, ուստի Հանձնաժողովը վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ վարչական վարույթի իրականացման ժամանակահատվածում Իրավատիրոջ կողմից ներկայացված ապացույցը, որն ըստ Իրավատիրոջ վկայում են ցանցային օպերատորի կողմից կատարված իրավախախտման փաստը, ինչպես նաև բացատրությունները հիմնավոր և բավարար չեն իրավախախտման փաստը ապացուցելու, ուստի արձանագրում ենք, որ ցանցային օպերատորի կողմից Օրենքի խախտում թույլ չի տրվել:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ ցանցային օպերատորի կողմից տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության խախտում չի իրականացվել, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 15 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության

կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 56-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Կարճել դիմումի հիման վրա «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 15 վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ**

06 դեկտեմբերի 2022թ.
ք. Երևան